



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

15 մարտի 2019 թ.

N 167-Ա

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՏՈՐԵՐԿՐՅԱՒ ՔԱՂՅՐԱՀԱՄ ՋՐԵՐԻ ՀԻԴՐՈՆԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՐԻՆԳԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 1135-Ն որոշման 15-րդ կետի 1-ին ենթակետը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.


Հաստատել Արցախի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոներկրաբանական մոնիթորինգի 2019 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ

[Handwritten signature]

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության 2019 թվականի
մարտի 15-ի N 167-Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր .

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՏՈՐԵՐԿՐՅԱՒ ՔԱՂՅՐԱՀԱՄ ՋՐԵՐԻ ՀԻԴՐՈՆԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՐԻՆԳԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ

I. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Արցախի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերը ջրաբանական տեսանկյունից քիչ են ուսումնասիրված: Մշտադիտարկումների համար անհրաժեշտ դիտակետերի բացակայության պատճառով անհնար է գնահատել ստորերկրյա ջրերի որակական և քանակական փոփոխությունները, ինչպես նաև ապահովել դրանց ռացիոնալ կառավարումը շահագործման ընթացքում:

Ստորերկրյա ջրերի արդյունավետ օգտագործման տեսակետից ստորերկրյա ջրաղբյուրների գոյքագրումն ու անձնագրավորումն անհրաժեշտ և հիմնական միջոցառումներից են: Հաշվի առնելով ստորերկրյա ջրաղբյուրների գոյքագրման վաղեմությունը, վերջին տարիների մթնոլորտային սակավ տեղումները, ինչպես նաև նոր հորատված և չհաշվառված հորատանցքերի փաստը, ջրային ռեսուրսների արդյունավետ ու խնայողաբար օգտագործելու ժամանակի պահանջը՝ անհրաժեշտ է կատարել նոր գոյքագրում: Այդ աշխատանքների արդյունքում հնարավոր է գնահատել ստորերկրյա ջրերի շահագործողական պաշարները:

Ստորերկրյա ջրերի որակական և քանակական փոփոխությունների կանխատեսման և դրանց պահպանման նպատակներով անհրաժեշտ է իրականացնել հիդրոներկրաբանական մշտադիտարկումներ, ստեղծել մշտադիտարկման ցանց, որը կընդգրկի Արցախի Հանրապետության տարածքի տարբեր հիդրոներկրաբանական պայմաններում ձևավորվող ստորերկրյա ջրերը:

Արցախի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոներկրաբանական մոնիթորինգի 2019 թվականի ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսված աշխատանքներն ու գործառնությունները կիրականացվեն Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակիցների կողմից՝ Հայաստանի Հանրապետության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի աջակցությամբ:

Ծրագրի իրականացումը համապատասխան մակարդակով ապահովելու համար Հայաստանի Հանրապետության մասնագիտացված կազմակերպություններից խորհրդատվական և ծրագրով նախատեսված աշխատանքներին անմիջական մասնակցություն ցուցաբերելու նպատակներով կներգրավվեն բարձր որակավորում ունեցող մասնագետներ՝ պայմանագրային հիմունքներով:

II. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է ստորերկրյա ջրերի արդյունավետ օգտագործումն ու պահպանությունն աղտոտումից և սպառումից, հիդրոերկրաբանական մշտնդիտարկումների միջոցով ստորերկրյա ջրերի հետ կապված էկոհամակարգերի պահպանության ապահովումը:

Ծրագրի խնդիրներն են՝

- 1) ստորերկրյա ջրաղբյուրների գույքագրումը, տեխնիկական վիճակի գննումը.
- 2) մշտադիտարկման ցանցի ստեղծումը.
- 3) ստորերկրյա ջրերի պետական կադաստրի ստեղծումը.
- 4) ստորերկրյա ջրերի կայուն կառավարմանն ուղղված հետազա միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների մշակումը:

III. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ծրագրի շրջանակներում իրականացվելու են տեղեկատվության հավաքագրում, դաշտային աշխատանքներ: Իրավիճակի ուսումնասիրման նպատակով կազմակերպվելու են տեղազննման երթուղիներ՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի, Քաշաթաղի, Հադրուփի, Մարտունու, Ասկերանի և Շուշիի շրջանների համայնքների ուղղությամբ: Ծրագրով նախատեսված 97 դիտայցերը կիրականացվեն աշխատանքային խմբի կողմից, կկատարվեն մոնիթորինգային դիտակետերի տեղերի ընտրություն:

Ծրագրի շրջանակներում կկատարվի գոյություն ունեցող արխիվային նյութերի հավաքագրման, մշակման և համակարգման աշխատանքներ:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել ստորերկրյա ջրաղբյուրների գույքագրման, տեխնիկական վիճակի գննման աշխատանքներ: Գույքագրման ժամանակ կհաշվառվեն բոլոր բնաղբյուրները, հորատանցքերը՝ անկախ դրանց օգտագործման ոլորտից (խմելու, տեխնիկական, արդյունաբերության, կենցաղային կարիքների և ոռոգման):

Ստորերկրյա ջրաղբյուրների գույքագրման ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- 1) տեխնիկական վիճակի ուսումնասիրություններ.
- 2) համարակալում.
- 3) ստորերկրյա ջրերի պահպանման գոտիների անհրաժեշտ չափսերի կամ գործող գոտու վիճակի, հնարավոր աղտոտման օջախների առկայության վերաբերյալ տվյալների հավաքագրում.
- 4) քարտեզագրում:

Վերջում կամփոփվեն ստացված դաշտային հետազոտական աշխատանքների արդյունքները և կկազմվի հաշվետվություն:

IV. ԱՎՆԿԱԿՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ծրագրի իրականացումից ակնկալվում են ստորերկրյա ջրերի ռացիոնալ կառավարում և արդյունավետ օգտագործում, հենակետային մշտադիտարկման ցանցի ստեղծում, ստորերկրյա ջրերի պետական կադաստրի տվյալների բանկի հարստացում, ստորերկրյա ջրերի ռացիոնալ օգտագործման շնորհիվ ապագայում կայուն տնտեսական զարգացման ապահովում:

Ստորերկրյա ջրաղբյուրների գույքագրման արդյունքում կճշգրտվեն՝ ստորերկրյա ջրաղբյուրների քանակը, տեխնիկական և սանիտարական վիճակը, տեղադիրքը, օգտագործման ոլորտը և օրինականությունը:

Ստորերկրյա ջրաղբյուրների գույքագրման աշխատանքների արդյունքները հնարավորություն կընձեռեն ճիշտ լուծումներ տալ ջրային ռեսուրսների առաջարկի և պահանջարկի ձևավորմանը, դրանց արդյունավետ ու խնայողաբար օգտագործմանը՝ բացառելով բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

V. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ծրագրի իրականացման համար «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի 05 բաժնի 6 խմբի 1 դասի «04. ԱՀ տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգի ծրագիր» ծրագրով նախատեսվել է 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵՎՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ